

**Հ Ո Ւ Շ Ա Թ Ե Ր Թ**

**ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ԴԵՂՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Բնակչության նախազգուշացման համար կիրառվում են հետևյալ ազդարարման ազդանշանները՝ «Օդային տազնապ», «Ուշադրություն բոլորին»: Ազդարարման ազդանշանները տրվում են հետևյալ դեպքերում՝

- 1) «Օդային տազնապ» ազդանշանը տրվում է օդային հարձակման դեպքում,
- 2) «Ուշադրություն բոլորին» ազդանշանը տրվում է արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի և օդային տազնապի ավարտի դեպքում:

**Ազդանշանների հայտարարման ժամանակ**

Ազդանշանների անվանումը	Հաղորդման ձևը	Գործողությունները
1	2	3
«Օդային տազնապ»	Էլեկտրաշչակների միջոցով՝ ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան (2-3րոպե տևողությամբ)	<p align="center"><b>Արտադրական կազմակերպություններում</b></p> <p>Դադարեցնել բոլոր տեսակի աշխատանքները, անջատել արտադրական և տեխնոլոգիական բոլոր սարքավորումները, գազամատակարարումն ու էլեկտրասնուցումը, իջեցնել սարքավորումներում օդի, գազի, ջրի, թթվածնի և այլ նյութերի բարձր ճնշումը, որից հետո՝ պատասպարվել թաքստոցում:</p> <p>Արտադրության և այլ տեխնոլոգիական գործընթացների պայմաններով սահմանված աշխատանքների դադարեցման անհնարինության դեպքում տեխնոլոգիական գծերը, վառարանները, տուրբինները բերել անվտանգ աշխատակարգի և պատասպարվել թաքստոցում.</p>

		<p style="text-align: center;"><b>Տանը գտնվելիս</b></p> <p>Մինչ բնակարանը լքելը անջատել գազամատակակարումն ու էլեկտրասնուցումը, փակել ջրի ծորակները, հագնվել, հագցնել երեխաներին ու ծերերին, վերցնել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներն ու անձր հաստատող փաստաթղթերը, անհրաժեշտ իրերն ու որոշակի քանակությամբ սննդամթերք և ջուր, արագ, առանց խուճապի պատսպարվել նախատեսված թաքստոցում: Հնարավորության դեպքում տեղեկացնել հարևաններին:</p> <p style="text-align: center;"><b>Փողոցում և բաց տարածքներում գտնվելիս</b></p> <p>Արագ՝ առանց խուճապի, որոշել մոտակա թաքստոցի տեղը և պատսպարվել այնտեղ: Մոտակայքում թաքստոցների բացակայության դեպքում պատսպարվել ճանապարհամերձ առվակների, հեղեղատարների համար նախատեսված կառույցներում, տարբեր տեսակի փոսորակներում, թմբապատնեշների և ոչ բարձր պատնեշների (պատերի) հետևում:</p>
1.	2.	3.
«Օդային տազնապ»	<p style="text-align: center;"><b>Էլեկտրաշչակների միջոցով՝ ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան (2-3րոպե տևողությամբ)</b></p>	<p style="text-align: center;"><b>Քաղաքային տրանսպորտում գտնվելիս</b></p> <p>Զլքել տրանսպորտային միջոցը ընթացքի ժամանակ և չխոչնդոտել վարորդի գործողություններին: Տրանսպորտային միջոցը կանգնելուց հետո արագ, բայց առանց խուճապի, դուրս գալ փողոց և պատսպարվել մոտակա թաքստոցում:</p> <p style="text-align: center;"><b>Կազմակերպություններում և հասարակական շենք-շինություններում գտնվելիս</b></p> <p>Ուշադիր և հանգիստ լսել համապատասխան հրահանգը (հաղորդագրությունը) մոտակա թաքստոցների տեղակայման և դրանց հասնելու կարճ երթուղու մասին, արագ՝ առանց խուճապի, շարժվել նշված երթուղով և պատսպարվել թաքստոցում: Համապատասխան հրահանգ (հաղորդագրություն) չլինելու դեպքում դուրս գալ փողոց և պատսպարվել մոտակա թաքստոցում:</p>

<p>«Ուշադրություն և բոլորին»</p>	<p>Էլեկտրաշաքիների միջոցով՝ անընդհատ (չընդհատվող) ձայնային ազդանշան (2-3 րոպե տևո- ղությամբ), միաժամանակ՝ հեռուստատեսությամբ , ռադիոհեռարձակմամբ , բարձրախոսներով տրվում է «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին» ձայնային հաղորդագրություն</p>	<p>Միացնել ռադիոն, հեռուստացույցը՝ հատուկ հաղորդագրություններ լսելու համար, հետևել պաշտոնական հաղորդագրություններին, գործել համաձայն հաղորդվող հրահանգների</p>
--------------------------------------	---	--

	<p>«Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին»: Ճառագայթային վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին</p>	<p>Համաձայն ազդանշանի անհրաժեշտ է ձեռքի տակ եղած միջոցներով փակել շնչուղիները, վերցնել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներն ու անձը հաստատող փաստաթղթերը, անհրաժեշտ իրերն ու որոշակի քանակությամբ սննդամթերք, ջուր և արագ պատասպարվել թաքստոցում: Դրանց բացակայության դեպքում ճառագայթաակտիվ աղտոտվածությունից պաշտպանվելու համար՝ որպես թաքստոց, կարող են ծառայել նաև փակ շինություններն: Տանը կամ աշխատավայրում մնացած անձինք, ովքեր չեն հասցրել պատասպարվել թաքստոցում, պետք է ժամանակ չկորցնելով, իրականացնեն տարածքի հերմետիկացման աշխատանքներ՝ ծածկեն դռներն ու պատուհանները և փակեն առկա ճեղքերը՝ օգտագործելով ձեռքի տակ եղած միջոցներ: Բարձրահարկ շենքերում գտնվելիս անհրաժեշտ է շտապ լքել վերին հարկերը և տեղ զբաղեցնել նկուղային տարածքներում կամ դրանց բացակայության դեպքում՝ շենքի առաջին հարկերում:</p>
1	2	3
<p>«Ուշադրություն բոլորին»</p>	<p>«Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին»: Հայտարարված է քիմիական տագնապ: Վտանգ է սպառնում ...թաղամասերին, ...շենքերին</p>	<p>Քիմիական վարակման օջախում գտնվելիս անհրաժեշտ է ձեռքի տակ եղած միջոցներով պաշտպանել շնչուղիներն ու մաշկը և արագ դուրս գալ տարածքից՝ շարժվելով քամուն ուղղահայաց՝ աջ կամ ձախ: Եթե մոտակայքում թաքստոցները բացակայում են, ապա վտանգավոր նյութերի ազդեցությունից կարելի է պաշտպանվել բնակելի և արտադրական տարածքներում:</p>

	<p>«Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին»: Աղետալի ջրածածկման վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրե-րին, ...տներին, .... կազմակերպություններին</p>	<p>Անհրաժեշտ է վերցնել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներն ու անձր հաստատող փաստաթղթերը, անհրաժեշտ իրերն ու որոշակի քանակությամբ սննդամթերք և ջուր, անջատել գազամատակարարումն ու էլեկտրասնուցումը, փակել ջրի ծորակները և հետևել դեպի բարձրադիր անվտանգ տարածք:</p>
	<p>«Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին», «Օդային տազնապի ավարտ»</p>	<p>Համապատասխան պատասխանատուների թույլտվությամբ, դուրս գալ թաքստոցներից և անցնել առօրյա գործունեության:</p>

Հիշել՝ անհրաժեշտ է ունիանություն ժամանակ բացել բերանը և ձեռքերով փակել ականջները:

**Ծանոթություն.**

**Թաքստոց** – Ամրացված կառույցներ, բնական միջավայր, տեղական առարկաներ (նկուղներ, կիսանկուղներ, խորացված տարածքներ, հանքախորշեր, ստորգետնյա անցումներ, մետրոպոլիտենի ստորգետնյա կայարաններ), որոնք կարող են պաշտպանել մարդկանց, տեխնիկան և ունեցվածքը պատերազմական պայմաններում, ռազմական կոնֆլիկտների ժամանակ կիրառվող խոցման միջոցների ազդեցության գործոններից ու վթարներից, աղետներից և այլ արտակարգ իրավիճակների ազդեցությունից:

**Պատասպարում** – Զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում.